ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Գամիրքը, ինչպես տեսանք, հնագույն ժամանակներից հանդիսացել է Թոգ-արմանների (արմենների) օրրանը, որը հետագայում եղել է նույնպես հայ ժողովրդի գոյացման, կազմավորման գլխավոր կենտրոններից մեկը։ Այդ մասին է խոսում Ստրաբոնի այն վկայությունը, թե մինչև Անտիտավրոսի երկիրը բոլորը միալեզու՝ հայախոս դարձան[1]։ Հետաքրքրական է նաև Մ. Խորենացու թեև առասպելական, բայց որոշ հիմք ունեցող այն տեղեկությունը, որ Արամը գրավելով մինչև Կապադովկիա՝ Արգեոս (Էրճիաս) լեռան շրջակայքը, հրամայում է իր Մշակ գորավարին այդ վայրում կառուցել դաստակերտ, բնիկներին սովորեցնել հայերեն, որ նրա շինած բերդաքաղաքը՝ Մշակի անվան աղավաղումով, հույների կողմից կոչվում է Սաժամ, հետագայում՝ Կեսարիա։ Այդ իսկ պատճառով, ավելացնում է Մ. Խորենացին, հույները այդ շրջանը կոչում էին «Պուոտին Արմինիա», այսինքն՝ Առաջին Հայք[2]։ Կապադովկիայի այդ մասը, այսինքն՝ Գամիրքը, Տիգրանի օրոր, թեև որոշ ժամանակ Հայաստանի մասն է կազմել, բայց հետագայում, Արշակունիների ժամանակ, նա վաղուց դադարել էր, իրավապես, Հայաստանի մասը լինելուց։ Այնուամենայնիվ, Գամիրքում գոյություն ուներ հայ ազգաբնակչություն, ինչպես նաև թագավորների որոշ ոստաններ[3]։ Այստեղ տեղին է նշել մի հանգամանք, որ վաղ միջնադարում գերակայության պայքարը երբ մտցվում էր դավանական հարցերի խողովակով և ժողովուրդների էթնիկ գիտակցությունը իր խանձարուրի մեջ էր գտնվում, բնակիչները, ընդ որում և հայերը, հատկապես հունադավան հայերը, դյուրավ կարող էին ձուլվել Կապադովկիայում հետզհետե տիրող տարրի՝ հույների հետ։ Մխիթար Ապարանցին, խոսելով ծայր հայերի մասին, գրում է. «Եւ ոմանք կոչին Նաթ հայեր, որ լեզուով և գրով տգդաւ են հայք, բայց դաւանութեամբ և ամենայն օրինօք են հոյնք»[4]։ Այսպես, նրանք հունադավան դառնալով, հետզհետե խզեցին հայ ազգարնակչության հետ իրենց տգդային կուլտուրական բոլոր կապերը։ Այս գրությունն իշխում էր 5—7-րդ դարերում, մինչև որ Գամիրքի հայ ազգարնակչության մեջ նոր քանակ և որակ ստեղծեցին Հայաստանից այն գաղթերը, որոնք տեղի ունեցան 8-րդ դարի կեսերից մինչև 11-րդ դարի վերջերը, այսինքն՝ արաբական արշավանքներից սկսած մինչև սելջուկյան թուրքերի ներխուժումը։ Ճիշտ է, դրանից առաջ ևս

---

[1] Տե՛ս Strabon. XI, 14, 5 (528)։ Հմմտ. Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա., Երևան, 1945, էջ 116։

[2] Մ. Խորենացի. Պատմություն հայոց, Տիֆլիս, 1913. էջ 46։

[3] Տե՛ս, K. Aslan, Etude historique sur le peuple armenien, Paris, 1909, էջ 138, 198; Diodoros, Bibl. Hist.

[4] «Նաթ հայերի» մասին տե՛ս Մխիթար Ապարանցու գրածը Ալիշանի «Հայապատում»-ում, էջ 550—553։

Հայաստանից դեպի Փոքր Ասիա տեղի էին ունեցել մի շարք մասնավորապես մեծ դաղթեր, առևտրական կամ այլ շահութաբեր գործերի և զինվորական ծառայությունների հրամայքներով, ինչպես նաև, բռնի կամ ստիպողական։ Օրինակ, 572 թ. պարսիկների դեմ հայերի ապստամբության պարտությունից հետո, Վարդան Մամիկոնյանը յուրայիններով դաղթում է Բյուզանդական երկիրը։ Հուստինիանոս 2-րդը, 688 թվականին Հայաստանը նվաճելով, 8 հազար տուն հայեր Փոքր Ասիա և Թրակիա է տեղափոխում։ Սակայն, մեր ուսումնասիրության նյութից դուրս է մնում դեպի Փոքր Ասիա տեղի ունեցած բոլոր հայկական դաղթերը։ Այստեղ կիսոսվի միայն հայերի այն երկու խոշոր ժողովրդական «դաղթերի» մասին, որոնք ամբողջությամբ տեղավորվելով Գամիրքում, նոր կերպարանք տվին Գամիրքի հետագա էթնիկական կազմին։

Նախքան այդ դաղթերի մասին խոսելը, արժե երկու խոսքով վերհիշել 4—5-րդ դդ. Հայաստանում տիրող դրության և բյուզանդացիների հեռատնդած բաղաքականության մասին։ Ինչպես հայտնի է, 387 թ., Թեոդոսոսի և Շապուհ 2-րդի դաշնագրությամբ, Հայաստանը բաժանվում է երկու մասի։ Բյուզանդացիք իրենց բաժնի՝ Արևմտյան Հայաստանի վրա նշանակում են կոմս, իսկ Արևելյան Հայաստանում, սասանյանները 428 թ. հետո՝ մարզպան։

Չնայած Արշակունիների թագավորության վերացմանը, երկրի վարչական դրության մեջ որոշ ժամանակ փոփոխություններ տեղի չեն ունենում։ Երկիրը իր երկու մասերումն էլ կառավարվում է բացառիկ վարչությամբ և տեղական օրենքներով, այսինքն՝ հայ նախարարները դեռևս պահում էին իրենց տանուտիրական իրավունքները, իսկ եկեղեցական թեմերը դնալով լցվում են՝ 4-ի փոխարեն, 5-րդ դարում, հասնում են 15-ի։ Դա բացատրվում է նրանով, որ մարզպանության շրջանում հայ եկեղեցին դեռևս իր ձեռքին էր պահում երկրի դատական գործերը, միաժամանակ նաև երկրի բնակչության և ունեցվածքի հաշվառման իրավունքը։ Այսպիսով, պարսիկ տիրողների համար հայ ֆեոդալական եկեղեցին կարող էր մեծ ծառայություններ մատուցել, որի համար նա վայելում էր նույնպես որոշ արտոնություններ։

Հետագայում իրերի դրությունը փոխվում է. բյուզանդացիք, Արևմտյան Հայաստանում ջնջելով տեղական օրենքները, սպառնում են նախարարների տանուտիրական իրավունքներին, հարկային և այլ միջոցներով ոչ միայն սկսում են հայերին կեղեքել, այլև ընդունել տալ քաղկեդոնականությունը։ Սասանյանները իրենց հերթին Հայաստանի արևելյան մասում բռնի ուժով փորձում են պարտադրել զրադաշտականությունը, քանի որ այդ ժամանակներում հայ լուսավորչական եկեղեցին միաժամանակ ներկայացնում էր հայերի ազգային դեմքը։ Ուստի և հայերը, և մեկին և մյուսին պատասխանում են զինված ապստամբություններով։ Պարսկատիպատակ հայերը 451-ից, իսկ բյուզանդահպատակները՝ 475 թվականից մինչև 640 թվականը (մինչև արաբական ներխուժումը), հաշված մանր և մեծ ապստամբությունները, ինն անգամ զենքի են դիմել և ավելի քան վաթսուն տարի պայքարել են իրենց տիրակալների դեմ, որի ընթացքում և հատկապես նրանից հետո հայերի գաղթը դեպի Գամիրք դնալով մեծ չափերի է հասել։

Ա. ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԴԵՊԻ ԳԱՄԻՐՔ

Հայերի գաղթերը դեպի Փոքր Ասիա և դեպի Գամիրք, որքան էլ Հայաստանում բյուզանդացիների, պարսիկների և արաբների կողմից գործված ավերածությունների, հարստահարությունների, կեղեքումների հետևանք համարվեն, այնուամենայնիվ, այդ գաղթերի պատճառներից գլխավորը հանդիսանում էր բյուզանդական կայսրության ենթադրյալ քաղաքականությունը։ Բյուզանդական կայսրությունը մեկ կողմից հայերի դիմադրական ուժը թուլացնելու համար ջանք էր թափում հայերի ռազմական ուժը Հայաստանից հեռացնել, մյուս կողմից, արաբական արշավանքների դեմ պատվար ստեղծել, այդ նույն հայերին բնակեցնելով Անտիտավրոսյան երկրում։

[5] Մ. Չամչյանց. Պատմություն հայոց. Վենետիկ, 1785, հ. Բ., էջ 288։

[6] Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ), Տիեզերական պատմություն, գիրք 2, 1896, էջ 101։

Բյուզանդական կայսրությունը իր այդ քաղաքական պլանը իրագործելու համար, Երբ հայերին Հայաստանում բազմապիսի միջոցներով, հարկային ծանր տուրքերով, քաղաքական սադրանքներով նեղում էր, մինչդեռ Փոքր Ասիայում ընդհանրապես, իսկ մասնավորապես Գամիրքում ապրող հայերին հողային, հարկային որոշ զիջումներ էր անում։ Հույների հետ ունեցած իրենց կուլտուրական կապերի հետևանքով և հակառակ իրենց միջև եղած կրոնական վեճերին, հայերը իրենց հերթին, հաճախ պարսիկներից, արաբներից ավելի նախապատվություն էին տալիս բյուզանդացիներին։

Հայկական առաջին մեծ գաղթը դեպի Գամիրք, բաղկացած Պավլիկյան աղանդավոր, ապստամբ հայ գյուղացիներից, տեղի է ունենում 726 թվականին։ Երկրորդը՝ 1021 թվականից մինչև 1064 թ. Արծրունիների և Բագրատունիների գլխավորությամբ՝ Վասպուրականից, Անիից և Կարսից։

Պատմական Հայաստանի հողի վրա կոմմագենից Աղձնիք, 7-րդ դարի կեսերից ծնունդ առած աղանդավորական շարժումները, որոնք հայտնի էին պավլիկյանների շարժում անվան տակ, աշխարհիկ ֆեոդալների և հատկապես, հայ եկեղեցական ֆեոդալականության շահերին մեծ վնաս էին հասցնում։ Ներսես Տայեցի (Շինող) կաթողիկոսը, զգալով ժողովրդի մեջ այդ նոր ուսմունքի լայն արձագանք գտնելու հնարավորությունները, ուստի և, եկեղեցու շահերին հասցվելիք վնասները, 655 թվականին գիմում է աշխարհական իշխանության դատաստանին, որ նրանց նակատը խարանելով երկրից դուրս արտաքսեն։ «...Հալածեաց գամենայն աղանդաւորսն ի ձեռս իշխանաց. նաև զոմանս ի նոցանէ շանթիւ դրոշմեալ ի ճակատս խայտառակութեամբ արտաքսեաց ի վիճակէ իւրմէ»[1]։ Արտաքսված աղանդավորները, ինչպես դրում է Հովհ. Օձնեցին, հաստատվում են Ջրկա կամ Ջրիկ կոչված գեղատեսիլ մի լճակի մոտ[2]։ Այդտեղ՝ Դերսիմի լեռների ստորոտն են գալիս Հայաստանից և Բյուզանդական հողերից արտաքսված պավլիկյան աղանդավորները, ինչպես նաև. մեծամասնությամբ վանքապատկան հողերից փախուստ տված շինականները։ Եվ այդ վայրում. 7-րդ դարի 50-ական թվականներին նրանց կողմից կազմվում են անկախ «աշխարհիկ համայնքներ»։ Այդ համայնքները. իրենց թվով և գործունեությամբ դառնում են այնքան նշանավոր, որ հայ ֆեոդալների, հատկապես եկեղեցական իշխանավորների նախանձն են շարժում։ Այդ իսկ պատճառով է, որ 726 թ. ոստիկան Վլիթի ուժերի աջակցությամբ, նրանք պավլիկյանների վրա հարձակում գործելով, վերջիններիս վտարում են Եփրատի արևմտյան կողմը՝ Անտիտավրոսյան երկիրը։

Բյուզանդական պետությունը, որոշ քաղաքական նպատակներով, պավլիկյաններին տեղավորում է հենց Գամիրք գավառում։ Նրանք բնակություն են հաստատում այդ շրջանում արդեն գոյություն ունեցող երեք բերդերի շուրջը՝ Տիփրիկիայի (Տիվրիկ—Վ. Բ.), Արարկիրի և Կյուրինի մոտ, որոնք երբեք միասին կոչվում են «Նանամալա» կամ «Տրիսոլիս»[3]։ Այսպիսով, հայերը Գամիրքում դեռ 8-րդ դարի վերջերից մեծ թիվ և կոմպակտ ազգարնակչություն էին կազմում։ Այդ մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 9-րդ դարի սկզբին՝ պավլիկյանների երկու ֆրակցիաների ղեկավարները հայեր էին։ Առաջին ֆրակցիային պատկանող հաստատյաններին՝ Սերգիոս (Սարգիս) էր կոչվում, իսկ «Կյունոխորիտ» ֆրակցիայի ղեկավարը՝ Վահան[4]։

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Թեոդորա կայսրուհու (842 թ.) պավլիկյանների դեմ սկսած հալածանքների և Վասիլ Ա-ի (872 թ.) տարած հաղթության հետևանքով՝ Գեբսիմի լեռների ստորոտն են գալիս Հայաստանից և Բյուզանդական հողերից արտաքսված պավլիկյան աղանդավորները, ինչպես նաև. մեծամասնությամբ վանքապատկան հողերից փախուստ տված շինականները։ Եվ այդ վայրում. 7-րդ դարի 50-ական թվականներին նրանց կողմից կազմվում են անկախ «աշխարհիկ համայնքներ»։ Այդ համայնքները. իրենց թվով և գործունեությամբ դառնում են այնքան նշանավոր, որ հայ ֆեոդալների, հատկապես եկեղեցական իշխանավորների նախանձն են շարժում։ Այդ իսկ պատճառով է, որ 726 թ. ոստիկան Վլիթի ուժերի աջակցությամբ, նրանք պավլիկյանների վրա հարձակում գործելով, վերջիններիս վտարում են Եփրատի արևմտյան կողմը՝ Անտիտավրոսյան երկիրը։

Բյուզանդական պետությունը, որոշ քաղաքական նպատակներով, պավլիկյաններին տեղավորում է հենց Գամիրք գավառում։ Նրանք բնակություն են հաստատում այդ շրջանում արդեն գոյություն ունեցող երեք բերդերի շուրջը՝ Տիփրիկիայի (Տիվրիկ—Վ. Բ.), Արարկիրի և Կյուրինի մոտ, որոնք երբեք միասին կոչվում են «Նանամալա» կամ «Տրիսոլիս»[3]։ Այսպիսով, հայերը Գամիրքում դեռ 8-րդ դարի վերջերից մեծ թիվ և կոմպակտ ազգարնակչություն էին կազմում։ Այդ մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 9-րդ դարի սկզբին՝ պավլիկյանների երկու ֆրակցիաների ղեկավարները հայեր էին։ Առաջին ֆրակցիային պատկանող հաստատյաններին՝ Սերգիոս (Սարգիս) էր կոչվում, իսկ «Կյունոխորիտ» ֆրակցիայի ղեկավարը՝ Վահան[4]։

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Թեոդորա կայսրուհու (842 թ.) պավլիկյանների դեմ սկսած հալածանքների և Վասիլ Ա-ի (872 թ.) տարած հաղթության հետև-

---

[1] Տե՛ս Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, Վենետիկ, հ. Բ., 1785, էջ 357։

[2] Յովհ. Օձնեցւոյ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 51։ Հայ պատմագրության մեջ Ջրկա կամ Ջրիկի նույնացումը Նփրկերտի (Մուֆարդին) հետ սխալ է։ Նփրկերտի մոտ մի գեղատեսիլ լճակի գոյությունը և ոչ էլ նրա բյուզանդական և արաբական սահմանագլխում գտնվելը այդ նույնացումը չեն արդարացնում, նախ Ջրկան կամ Ջրիկը լիճ չէ, այլ Մունձուրի (Տերոիմ) լեռներին կոթնած մի ավան։ Նփրկերտը Տերսիմի լեռներից դեպի հարավ բավական հեռու է գտնվում։ Ամենահավանակարը Լենկն է, որը գտնվում է Վերին Եփրատի ձախ ափին, Տիվրիկի, այսինքն՝ պավլիկյանների հետագա գլխավոր կենտրոնի ճիշտ դիմացը՝ Տերսիմի փեշերին։

[3] Աբրահամ Ալպայանց, Պատմություն հայ գաղթականության, Կահիրե, 1941, էջ 275։

[4] Հմմտ. Липшиц Е. Э., Византийский Временник, 1952, V, стр. 55.

վանքով, նրանց մի մասը ջարդվում, մյուս մասն էլ բռնի թրակիա են գաղթեցվում։ Հետևաբար, հայ ազգաբնակչությունը Դամիրքում համեմատաբար նվազում է։ Այնուամենայնիվ հետագայում, դեռևս նախքան Վասպուրականից՝ Արծրունիների, Անիից, Կարսից՝ Բագրատունիների գաղթը, 985 թվականին Դամիրքի հայ ազգաբնակչությունը (լուսավորչականները) պետք է, որ որոշ թվական կարևորություն ստացած լիներ, որպեսզի Խաչիկ Ա. կաթողիկոսին հաջողվեր Բյուզանդիայից արտոնություն ստանալ՝ երկու առաջնորդարան (եպիսկոպոսական աստիճանով) ունենալու, մեկը՝ Սեբաստիայում, մյուսը՝ Լարիսայում (Վիրան շահիր)։

Վասպուրականից՝ Արծրունիների, Անիից, Կարսից՝ Բագրատունիների Դամիրք գաղթումով, հայերը այդ երկրամասում կազմում են ազգաբնակչության գերիշխող մասը։ Հայ ֆեոդալները բնակություն հաստատելով Դամիրքում, կազմում են հայկական կախյալ իշխանություններ։ Սենեքերիմ Արծրունին հաստատվում է Հալիս գետի վերին հոսանքում, մինչև նրա ծունկը և Վերին Եփրատի աջ ափին՝ կենտրոն ունենալով Սեբաստիա քաղաքը։ Այլ խոսքով Ս. Արծրունին իշխում է Սեբաստիա քաղաքից մինչև Կեստրիա և Սեբաստիայից մինչև Արաբկիր ձգվող ողջ տարածության վրա։ Աշոտ Թաղավորի որդի Գագիկ Բագրատունուն, 1045 թ. արվում է Կեսարիայից մինչև Անտիտավրոսյան լեռների միջև ընկած երկրամասը (գլխավոր կենտրոն ունենալով Բիդուն), իսկ Կարսում իշխող Աբբասի որդի Գագիկին՝ Ծամնդավից (Զամանթիից) մինչև Խավատանքի (Կյուրին) շրջանները։

Դամիրքը այդ ժամանակներում դառնում է նաև կաթողիկոսանիստ վայր։ Այսպես, Անիի գրավումից հետո, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը տեղափոխվում է Սեբաստիա քաղաքը՝ Արծրունիների մոտ[6], իսկ Գրիգորիս Վկայասեր կաթողիկոսը (Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը), որն օծվում է Ծամնդավում՝ Աբբասի որդի Գագիկի պալատում[7], հետագայում ապաստան է գտնում Մուտուտասանում՝ Գուրգենի որդի Գագիկի մոտ։

Այս բոլորը վկայում են, որ այդ ժամանակ արդեն Դամիրքը դիտվում էր որպես հայկական գլխավոր կենտրոններից մեկը։

Հարկավոր է սակայն անդրադառնալ հայ պատմագրության մեջ տեղ գտած մի շարք տարակարծությունների քննությանը, որոնք ընդհանրապես վերաբերում են Արծրունիների, Բագրատունիների գաղթի թվականի, պատճառների, ինչպես նաև նրանց զբաղեցրած վայրերի և հարակից այլ հարցերին։

Հայ պատմագրության մեջ տիրապետող կարծիքն այն է, որ Սենեքերիմ Արծրունին սելջուկյան արշավանքներից վախենալով, իր որդու՝ Դավթի միջոցով Վասիլից խնդրում է Վասպուրականը փոխանակել Սեբաստիայի հետ։ Այդ թյուր կարծիքը այնքան էր տիրապետող դարձել, որ նույնիսկ Խրիմյան հայրիկը Սենեքերիմ Արծրունու ոսկորները Վարագա վանքի եկեղեցում մընալու ոչ արժանի համարելով, նրա աճյունը հանել տալով թաղել է տալիս հասարակած դերեզմանում[8]։ Սակայն պատմական դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 11-րդ դարի առաջին քառորդի սկզբներին սելջուկների՝ Ատրպատականի Դեյլեմ ցեղի և Միջին Ասիայից թափանցող թուրք և թուրքմեն ցեղապետների սովորական ասպատակությունները, Վասպուրականը թողնելու աստիճան վտանգ չէին ներկայացնում։ Ինչ վերաբերում է Մատթեոս Ուռհայեցու այն հավաստիացմանը, թե Սենեքերիմ Արծրունու որդին՝ Դավիթը, Վասպուրականի փոխանակության համար մեծ նվերներով Կոստանդնուպոլիս է գնացել և արժանացել Վասիլի սիրալիր ընդունելությանը։ Հիմք կա ենթադրելու, որ դա նույնպես ճիշտ չէ, որովհետև, ըստ պատմական փաստերի, Վասիլը 1020-ական թվականներին դեռևս գտնվում էր Վրաստանում և պատերազմում էր վիրա-աբխազական թագավորության դեմ։ Նա բուլղարների հետ հաշիվը մաքրելուց հետո միայն կարողացավ

[5] Ա. Աղեքսանդրյան. Պատմություն ականավոր բաղաքին Սեբաստիո, Վենետիկ, 1911։

[6] Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 132։

[7] Հմմտ. Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 131, և Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Մոսկվա, 1866, էջ 63։

[8] Բանաստեղծ Կարապետ Միտալի հաղորդումից։

զբաղվել հայերի հարցով և 1017 թվից հետո սկսեց ձեռնամուխ լինել իր վաղեմի ծրագրի կենսագործմանը՝ ոչնչացնել հայ և վրաց պետական կազմակերպությունները։ Այդ կապակցությամբ է, որ կայսրը 1020 թ. Տրապիզոն է հրավիրում Սենեքերիմի որդի Դավթին. Վասպուրականը Սեբաստիայի հետ փոխանակելու պայմանների մասին «բանակցելու» համար։

Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին, հակառակ իր կամքի, թողնում է իր երկիրը։ Որպես ապացույց կարելի է հիշատակել թեկուզ այն փաստը, որ Սենեքերիմ Արծրունին իր կտակում հիշատակում է, որ իր մահից հետո իր մարմինը փոխադրեն Վանի ս. Նշան Վարագա վանքը։ Սենեքերիմ Արծրունու այդ բաղձանքը նույնիսկ իր արտահայտությունն է գտել Վասպուրականի ժողովրդական ստեղծագործության մեջ։

Կտակ թողի իմ որդվոց
Զիս մի թաղել օտար վայր.
Այլ ի ոտանց Վարագա
Որի ի սեր վաղտյլ կամ[9]։

Համենայն դեպս, բյուզանդական կայսրությունը ստանում է 72 բերդ, 8 քաղաք, 400 գյուղ և 115 վանք. դրանց փոխարեն ասլով Սեբաստիան իր մերձակա երկու քաղաքներով՝ Լարիսա և Ավարա կամ Ամարա։

Հայ պատմագրության մեջ նկատվող տարակարծությունը դաղթողների թվի ու Սենեքերիմի ստացած վայրերի մասին առաջ են գալիս մի քանի հանգամանքներից։ Այս միջնադարյան պատմագիրները դանադանություն չեն գրել Սենեքերիմի ստացած ժառանգական կալվածքների և, որպես Կապադովկիայի կուսակալ, նրա տրամադրության տակ դրված հողերի միջև, իսկ օտար պատմագրերից ոմանք հիշատակել են և մեկը և մյուսը։ Օրինակ, շատերի համար անծանոթ է եղել Մուտառասունում մի ավատատերի՝ Գուրգենի որդի Գագիկի գոյությունը, որի մասին խոսում է Ուռհայեցին, նա գրում է. «... Եւ տէր—Գրիգորիսն եկեալ բնակեցաւ ի Մուտառասուն առ Գագիկ որդի Գուրգենայ[10]։ Մինչդեռ Մուտառասունի վայրը և Գուրգենի որդի Գագիկ ավատատերի անունը անծանոթ է ինչպես Օրմանյանին. այնպես էլ ուրիշներին։ Այս մասին Օրմանյանը գրում է. «...բայց դժբախտաբար ոչ ցուցված տեղը ծանոթ է և ոչ Գագիկ Գուրգենյան մը կճանչցվի, կաթողիկոսին հովանավոր ըլլալու կարող»[11]։ Թեև նկատի ունենանք Սենեքերիմի՝ Կապադովկիայի կուսակալ լինելու հանգամանքը, որ պարզապես հիշատակված է Կեգրենոսի մոտ, թե հույները Սենեքերիմին անվանում էին Պատրիկ և Զորավար Կապադովկիայի[12], ապա, հասկանալի կարող է դառնալ հարցը, քանի որ Սենեքերիմը որպես կուսակալ կարող էր իր իշխանության սահմաններում տեղավորել փոքր վասալներ, ինչպես իր եղբորորդիներին՝ Դերենիկին, Գագիկին և Աշոտին։ Գուցե և այս պատճառով է, որ հայերը Սենեքերիմին «թագավոր» են անվանել, քանի որ նա իր իշխանության տակ դրված հողերում ունեցել է իրեն ենթակա վասալներ։

Իսկ ինչ վերաբերում է Գուրգենի որդի Գագիկին, ապա այս վերջինս հայտնի է Վարդան պատմիչի հետևյալ հիշատակությունից. «Վասպուրականի թագավորն յաղէն Սենեքերիմայ Գագիկ՝ որդի Դերենկան. սա շինեաց զԱխթամար. սապա Դերենիկ՝ որդի Նորա Աբուսահլ, և յետ Նորա Շահնշահ՝ որդի Նորա. և զկնի եղբայր Նորա Գուրգեն, և ապա եղբայր Նորա Սենեքերիմ, որ նեղեալ ի Պարսից՝ եւ զերկիր իւր ի Վասիլ և չորս որդւովք, որոց անուանք Դավիթ, Արուսահլ, Ստեմ և Կոսանդին, և եղբօր որդիքն՝ Դերենիկ, Գագիկ և Աշոտ—և առնու փոխան զՍեբաստ և զՎարիս և յոլով Պոռասանիս»[13]։

Վարդանի վերոհիշյալ հիշատակությունից հաստատվում է, որ Գագիկը եղել է Սենեքերիմի եղբոր՝ Գուրգենի որդին, և հետևաբար. որպես ավատ ստացել է Մուտա-

[9] Բանաստեղծ Կարապետ Սիտալի հաղորդումից։

[10] Մ. Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, ս. Վաղարշապատ, 1898, էջ 206։

[11] Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա. հատ., կ. Պոլիս, 1912, էջ 1288։

[12] Theophanis continuatus, cedrenus, corpus scriptorum Historiae Buzantinae, Bonnae, 1838, էջ 464։

[13] Վարդան Բարձրբերդի. Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 124—125։

ռասունը, որի մոտ 1070-ական թվականներին ապաստանում է Գրիգորիս Վկայասեր կաթողիկոսը։ Մուտառասունը գտնվում է այնպիսի մի վայրում[14], որի շրջակայքում մինչև 18-րդ դարի վերջերը դեռևս կային բազմաթիվ հայ գյուղեր, ինչպես Կոմյուրբեն (Գամիրբան), Խնձորի և այլն (այս վերջինը գտնվում է Մուտառասունից 6 կմ հեռու)։

Համաձայն պատմական տվյալների, ենթադրվում է, որ Սենեքերիմի եղբորորդիներից Դերենիկը և Աշոտը, որպես ավատ, պետք է ստացած լինեն Սեբաստիայից դեպի հարավ-արևելք գտնվող ջրարբի հողերը, որտեղ կառուցում են Մարընտունիկ, Արարկիր և Աշոտի ավանները, իսկ հետագայում Անիից, Կարսից եկած գաղթականությունը կառուցում է բազմաթիվ հայ գյուղեր՝ Արեղանոց, Ագրակ, Բաղմաշէն, Ապրանք, Փշատի, Ուռեկ, Ավերակ, Միջին գյուղ, Պարտիզակ, Արտոնս, Հեղետար, Խասկալ, Մեծ և Փոքր Վարդենիք, Փետրական, Խնձոր, Սերկևիլ, Տանձիկ, Կծու, Դրրնիկ, Վանկուկ, Գանսար, Պարտձոր, Հացտեսի, Աշոտկա, Բակեր, Ջար, Գլակ և այլն։

Ինչպես հիշյալ գյուղերի, նույնպես և Աշոտի մեծ ավանի անունները ստուգաբանության հարկ չեն զգում։ Ինչ վերաբերում է Աշոտի և Աշոտկա գյուղերին, ապա շատ հավանական է, որ դրանք կառուցված լինեն հենց Սենեքերիմի եղբոր որդի Աշոտի կողմից և կամ նրա հիշատակին, իսկ Բինկյանի մոտ Ջենեքեր գյուղը՝ Սենեքերիմ արքայի անվամբ։ Մարընտունիկը թերևս աղավաղված մի ձևն է մայր-ընտանիքին կամ մայր-ընդ-տանին, որ նշանակում է Վասպուրականի կողմից եկած իշխանական տոհմի մարդկանց բնակավայր։ Հետագայում Մարընտունիկը Անիից, Կարսից և այլ տեղերից եկած զաղթականություններով մեծանալով հասնում է մինչև «Քարանձավ» դղեակն՝ Ակն կոչեցեալ», որի հետևանքով Մարընտունիկը անվանվում է Ակն կամ Բուրբեն՝ Էկին։ Այս մասին կան որոշ փաստաթղթեր՝ դրված օսմանյան թագավորների կողմից, որտեղ Ակնի վայրը հիշատակվում է Մարընտունիկ Գազասը անվան տակ։ Այս բոլորը հաստատում է, որ Արծրունիների իշխանական տոհմի մի շառավիղը հաստատվել է այդ վայրերում։

Ինչպես ասվեց, Սենեքերիմի հետ գաղթող մարդկանց թվի մասին ևս կան տարբեր կարծիքներ. այսպես, օրինակ՝ Վասպուրականից գաղթողների թիվը ոմանք բարձրացնում են մինչև 400 հազարի։ Մենք նկատի ունենալով Վասպուրականի բնակչության թիվը և հայերի ձեռքին մնացած վանքերի թիվը, ճիշտ ենք համարում Թովմա Արծրունու տված տեղեկությունները, թե «Սենեքերիմի թուին հայկազնեան տոմարին ՆՀ (1021 թ.), և դեմ եղեալ զնացին յաշխարհն Յունաց ԺԴՌ (14,000) արամբք, թող զկանայս և մանկտիս»[16], այսինքն՝ չհաշված կանանց և երեխաներին, այր մարդիկ միայն ըստ Արծրունու կազմել են 14,000 հոգի, ուստի կանանց և երեխաներին միասին հաշված, Վասպուրականից շուրջ 40 հազար հոգի են գաղթել և հաստատվել Սեբաստիայի գավառը։

Ինչպես հայտնի է, բյուզանդական կայսրը Կոստանդին Մոնոմախին 1044 թ.. հաջողվում է Գագիկ թագավորին խաբեությամբ հրավիրել Կ. Պոլիս և գրավել Անին, որից հետո Անիի փոխարեն Գագիկին տրվում են հողեր Կապադովկիայում, Խարսիանեսում, Լիկանդոսում, Կալոնպաղատում և Բիզուում[17]։ Թեև չի կարելի միայն այսքանով թեկուզ և որոշ գաղափար կազմել այդ վայրերի ճշգրիտ տեղադրության մասին, բայց միջնադարյան հայ պատմագրերի տվյալներից ելնելով, կարելի է հաստատապես ասել, որ դրանց գլխավոր մասը գրտնվում էր Արդեռոս լեռից դեպի Զամանթի գետի շրջանը։

Հայ պատմագրության մեջ Բիզուի վայրի մասին բազմաթիվ կարծիքներ կան՝ թեր և դեմ։ Չնայած այն բանին, որ 11-րդ դարում Բիզուի մասին բազմաթիվ հիշատակություններ կան, բայց որպես քաղաք՝ նրա վայրը մինչև այժմ չի որոշված։ Հայտնի է

[14] Մուտառասունը այժմ թուրքմենական մի փոքր գյուղ է և գտնվում է Կեմերեկից 13 կմ հեռավորության վրա դեպի Բունարբաշի (Ագիզյե) տանող ճանապարհին։

[15] Հմմտ. Ց. Կ. Ճանիկյան, Հնութիւնք Ակնոյ, Թիֆլիս, 1895, էջ 14, և Ա. Քեչյան, Ակն և ակնցիք, հատոր Ա, Պուքրեշ, 1940, էջ 12—13։

[16] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։

[17] Schlumberger, L'Epopee Byzantine, Tome III, Paris, էջ 489։

միայն, որ Բիզուն իր մերձակա Կալոնպաղատ դղյակով եղել է Գագիկի գլխավոր ոստանը։ Հայ և օտար պատմագիրները Բիզուի վայրը դնում են Տավրոսյան լեռների մեջ, Կեսարիայի արևելյան կողմը, Ծամբողավ կամ այժմյան Ջամանթի գետի մոտերքում։ Մենք հավանական ենք համարում այդ ենթադրությունը, որովհետև Գամիրքի այդ շրջանում կան 60—70, մեծ մասամբ, հայաբնակ գյուղեր, որ կոչվում են Բոզուկի գյուղեր։ Ըստ Տ. Պալյանի, Բիզուն, նախ՝ էղել է Բիզուկ և ապա, ժողովրդական լեզվի սեջ աղավաղվելով, դարձել է Բոզուկ[18]։ Այդ շրջանում է գտնվում նաև Թոմարզա հայկական գյուղը, որը թուրքական կառավարության մոտ արձանագրված է Կյոստերև Նահիեսի[19] հին անունով՝ այսինքն Կիզիստրա։ Այսպիսով, հայտնի է դառնում Գագիկի գլխավոր կենտրոնի վայրը։

Կարսի իշխան Աբբասի որդի Գագիկը նույնպես 1064 թվականին ստիպված է լինում իր փոքրիկ թագավորության հողերը թողնել բյուզանդական կայսրությանը և դրանց փոխարեն ստանալ Ծամնդավը (Ջամանթը)։ Այսպիսով, 40 տարիների երկարատև պայքարից հետո միայն Վասիլ 2-րդի հաջորդներին հաջողվում է ջլատել հայերի դիմադրական ուժը և իրագործել բյուզանդական կայսրության Հուստինիանոսյան վաղեմի ծրագիրը։

Կարսի թագավոր Գագիկի ստացած հողերի մասին ևս, միջնադարյան հեղինակների մոտ կան տարակարծություններ։ Օրինակ՝ Մ. Ուռհայեցին գրում է. «Թողեալ Գագիկ զԿարս և գնաց ի Հոռոմս և թագաւորն Տուկիծ տայր նմա զԾամնդաւ. և անդ եկեալ Գագիկ աղատսք իւրովք և թողեալ զտունն հայրենեաց իւրոց»[20]։

Սմբատը սրա վրա ավելացնում է Կեսարիան և Խավատաններ[21] (Կյուրունը), իսկ Վարդանը 100 գյուղ ավելացնելով, հիշատակում է նաև 4 քաղաքների անունները՝ Ծամնդավ, Լարիսա, Ամասիա և Կոմանա[22]։

Այստեղ Ամասիայի հիշատակումը Վարդանի պատմության ընդօրինակության մի սխալ կարելի է համարել։ Նկատի ունենալով Ծամնդավից մինչև Ամասիայի մեջ ընկած տարածության ընդարձակությունը, անհավանական է, որ բյուզանդական կայսրությունը Ամասիայի նման սահմանագլխից հեռու և մեծամասնությամբ հույն բնակչություն ունեցող մի քաղաք թողներ Գագիկ թագավորին։ Երկրորդ, Անի քաղաքը սելջուկների կողմից գրավվելուց հետո, Կարսը գտնվում էր նրանց հարձակման սպառնալիքի տակ, որի պատճառով թագավորը հարկադրված թողնում է իր թագավորությունը, հետևաբար և նրա կողմից բնակավայրի ընտրության խնդիր չէր կարող լինել։ Երրորդ՝ պատմականորեն ճիշտ է նաև, որ Փոքր Ասիայում գոյություն է ունեցել երկու Նոմանա, մեկը՝ Կոմանա Պոնտոսի (այժմյան Թոքաթի մոտ Կյումեննկ կոչված գյուղի մոտ), մյուսը՝ Կոմանա Կապադովկիայի, որի ավերակները գտնվում են Հաճրնի և Կոկիսոնի (Գյոք-սու) միջև, հնից Շարգևրև (Սարգևրև) կոչված վայրում։ Եթե ընդունենք, որ Վարդանի հիշատակած Կոմանան, Կապադովկիայի Կոմանան է, ինչ որ շատ հավանական է, այն ժամանակ չորս քաղաքներից երեքը՝ Ծամնդավ, Լարիսա (Վերեն Շեհիր), Կոմանա ամփոփվում են Ուզուն-յայլայի միևնույն շրջանակի մեջ։ Իսկ Ամասիայի հիշատակությունը, ինչպես ճիշտ ենթադրում է Արշակ Ալպոյաջյանը, պիտի լինի Ամարայի կամ Ավարայի սխալ ընթերցումից։ Ամարան, ինչպես հայտնի է, գոյություն է ունեցել Գամիրքում, քանի որ հիշատակվում է Իսոֆաննեսի ժամանակագրության Շարունակողի մոտ, որպես պավլիկյանների կառուցած քաղաքներից մեկը[23]։

Այսպես, Վասպուրականի, Անիի և Կարսի հայ իշխաններին թույլատրվում է հաստատվել Անտիտավրոսյան երկրի այն հողերում, որոնք արար էմիրների կողմից ենթակա էին մշտական հարձակման։

Գամիրքը 11-րդ դարում գրեթե ամբողջությամբ բնակեցված էր հայերով, այնպես որ 1097 թ., երբ իսլակիրները Փոքր Ասիայի Հեբակլ (այժմյան Էրեյլի) քաղաքից անցնում են Կեսարիայի շրջանները, տեսնում են, որ այդ վայրերի բնակչությունը

---

18 Տ. Պալեան, Հայ վանորայք, էջ 125—126։

19 Հակոբ Աբրահամեան. Էվերեկի պատմությունը, Ա. գիրք, Կահիրե, 1935, էջ 24։

20 Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 151։

21 Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկվա, 1856, 762—63։

22 Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 136—137։

23 Théophanés Continuatus, Corpus scriptorum Ilisloriae Buzantinae, Bonnae, 1838, էջ 166։

մեծ մասամբ հայեր են, որի պատճառով այդ երկիրը նրանք անվանում են Hermoniorum terra («Հերմոնիորում տերրա»), այսինքն՝ հայկական երկիր[24]։

Բյուզանդական կայսրությանը թեև հաջողվում է նենգությամբ Հայաստանը մասամբ դատարկել հայերից, բայց նրան չի հաջողվում հատկապես 11-րդ դարում Գամիրք տեղափոխված հայերին ամբողջությամբ հունադավան դարձնել։ Եվ չնայած հույն մետրոպոլիտը խղճի ազատության դեմ զանազան արգելքներ է հարուցում (հայ եկեղեցիներում աղոթելում է զանազահարություններ, հայկական ծիսակատարությունը), սակայն նրան այնպես էլ չի հաջողվում Սեբաստիայում և Լարիսայում հաստատված (985 թ.) հայ եպիսկոպոսությունները ջնջել։ Պետք չէ մոռանալ, որ վաղ միջնադարում տասնյակ հազարավոր հայեր Փոքր Ասիայում բյուզանդացիների կողմից այդ նույն բաղաքականության հետևանքով կորցնելով իրենց ազգային հատկանիշները, ձուլվել են հույների հետ։ Այս մասին են վկայում Ակնա շրջակայքում հոռոմ-հայերի (հունադավան) այն 6 գյուղերը՝ Վան, Զորակ, Շրղու, Մուշեղկա, Հոդուս և Մամսա[25], որոնք հայ ժողովրդի հետ վաղուց խզել էին իրենց ազգային կապերը։

Բյուզանդական կայսրությունը, եթե հանձինս հունադավան հայերի իր համար փնտրում էր հլու կամակատարներ, ապա հույն եկեղեցին նոր ծխերով իր եկամտի աղբյուրներն էր ավելացնում. իսկ հույն կալվածատերերը հողի — պրոնիաներին կապված հորտերի՝ պտրիկոսների թիվն էին բազմապատկում։

Գամիրքի հայերը հակառակ բազմապիսի հալածանքներին ու սպառնալիքներին, 1080 թվին Ռուբենի գլխավորությամբ կարողանում են հույներից գրավել Գամիրքի սահմանում՝ Լեռնային Կիլիկիայում գտնվող վահկա բերդը և հիմք դնել մի ինքնավար մարզի։ Այսպիսով, բյուզանդացիների հաշիվները սխալ են դուրս գալիս։ Մինչդեռ նրանք հայերին Գամիրք փոխադրելով ցանկանում էին արաբների դեմ օգտագործել իբրև պատվար, հայերը Կիլիկյան իշխանության հիմքն են դնում այնպիսի մի վայրում, որտեղից պետք է անցնեին բոլոր առևտրական քարավանները, որով. անշուշտ. վնասում էին նաև բյուզանդական կայսրության տնտեսական շահերը։ Այսպիսով, Գամիրքը 11-րդ դարում դարձել էր հայկական այն գլխավոր կենտրոնը, որտեղ խմորվեցին Կիլիկիայի հայկական իշխանության առաջին սաղմերը։

Ր. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

(Տեղագրություն և վիճակագրություն)

Գամիրքը հյուսիսից և հյուսիս-արևելյից. համարյա ամբողջությամբ, շրջապատված է Հալիս գետի (Գրգրլ բրմագ) հովիտով։ Արևելքից որպես սահման ունի վերին Եփրատը, մինչև հին Մալաթիա քաղաքի հյուսիսային կողմը, Ակն ու Արտրկիրը նեբառյալ, հարավից՝ Թոնմա-սու (Սելաս գետ), Դարենտայի և Կյուրինի գավառակները, իսկ արևմուտքից՝ Պողոյանից մինչև Արգեոսի (Էրճիաս լեռ) շրջանները։ Հետևաբար այս եռանկյունաձև երկրամասը իր մեջ ընդգրկում է Սեբաստիա գավառի (Սվազ) ինը գավառակներից՝ յոթը, Խարբերդի նահանգից Ակն և Արաբկիր քաղաքները իրենց շրջակայքով, ինչպես նաև Կեսարիա գավառակի հյուսիս-արևելյան ու հարավ-արևելյան շրջանները։

Գամիրքի գլխավոր քաղաքներն են՝ Սեբաստիան, Կեսարիան, Կյուրինը, Արաբկիրը, Ակնը, իսկ հայաշատ գյուղաքաղաքներից Կեմերեկը (Գամրակ), Տիվրիկը և Դարենտեն։

Սեբաստիան, որն այժմ կոչվում է Սվազ, կառուցված է Հալիսի աջ ափին, զրանից կես ժամվա հանապարհ հեռու, մի ընդարձակ հովտի մեջ։ Քաղաքը հին ժամանակներում կոչվել է Կաբիրա, այն բերդի անունով, որ գոյություն ուներ Պոնտոսի թագավորության ժամանակ։ Պոմպեոսը այն անվանեց Դիոպոլիս, այսինքն՝ Յուպիտեր աստծու քաղաք, ի պատիվ այդ վայրում հռոմեական զորքերի կողմից Միհրդատի դեմ տարած հաղթանակի։ Սակայն, Պոնտոսի թագուհին՝ Պիթոդարիսը, որը բնակվում էր Կաբիրայում, այն վերանվանեց

[24] J. Laurent, Byzance et les turcs, Paris, էջ 71 և Etienne de Blois, Lettres, 2. Hep. 150.

[25] Ա. Քնչան, Ակն և ակնցիք, հ. Ա., Պուրբշ, 1940, էջ 10։

Սեբաստ (հունարեն Սեբաստոս) ի պատիվ Օգոստոս կայսեր։ Հայերենում Սեբաստի «բ»-ն «վ»-ի տառադարձությամբ, եղել է Սեւաստ։ Հետագայում Սեաստ անունը թուրքերենում աղավաղվելով, դառնում է Սվաղ կամ Սիվազ։

Սեբաստիա քաղաքը մինչև համաշխարհային առաջին պատերազմը (1914—1918 թթ) թեև որոշ փոփոխություն էր կրել, բայց հիմնականում իր հին տեսքը չէր փոխել։ Գ. Սրվանձտյանցը, խոսելով Սեբաստիայի 19-րդ դարի 70-ական թվականների դրության մասին, գրում է. Սեաստու քաղաքը անշուք մի տեսք ունի, շինված է մի հովտի մեջ, անծառ և անայգի։ Քաղաքի փողոցները քարահատակ չունեն, շուկաները և խաները տձև են շինված, ամբողջովին կավակերտ, թեպետ ներքուստ բավական շքեղությամբ։ Քաղաքը թեև ջրով առատ է, ինչպես առուներով, նույնպես և աղբյուրներով (համարյա տուն չկա, որ իր բակում աղբյուր չունենա), սակայն տեղ-տեղ լճացած ու նեխած ջրերի և աղբերի ապականության հետևանքով, փողոցները ժանտահոտություն են բուրում[1]։

Ինչ վերաբերում է Սեբաստիա քաղաքի բնակչության, հատկապես հայ ազգաբնակչության թվին, դարերի ընթացքում այն մեծ փոփոխությունների է ենթարկվել։ Այսպես, օրինակ, 11-րդ դարի առաջին քառորդին Վասպուրականից Արծրունիների գաղթից հետո քաղաքի բնակչության տիրող մեծամասնությունը կազմում են հայերը։ Հետագայում, 15-րդ դարի սկզբին, Լենկթեմուրի ջարդերի հետևանքով, հատկապես Սեբաստիայում, հայերի թիվը զգալիորեն նվազում է, այնպես որ մինչև 19-րդ դարի կեսերը Սեբաստիա քաղաքի ամբողջ բնակչությունը հաշվվում էր 16 հազար։ 19-րդ դարի վերջերին, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, երբ սկսվում է գյուղական բնակչության հոսքը դեպի քաղաք, Սեբաստիա քաղաքի բնակչության ընդհանուր թիվը, արդեն համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, հասնում է մոտ 60 հազարի, որի կեսից ավելին կազմում էր հայ ազգաբնակչությունը։ Այսպիսով, Սեբաստիան հանդիսանում էր Գամիրքի հայաշատ քաղաքներից առաջինը։

Հայերը բնակվում էին քաղաքի հետևյալ թաղերում (որոնց մի մասը թրքախառն էր, իսկ մեծ մասը զուտ հայկական). Կյուչյուկ Պենկիլեր կամ Աղ-Տեկիրման (Սպիտակ ջրաղաց) թաղ. Պյոյուկ Պենկիլեր կամ Պալաղ-Սոդաղ. Պեզիրճյուն արտ. Հոդգար և նրա առջևի Արտի նոր թաղեր. Փաշա-պարտեզ. Պարույրի արտ. Քոսե-դերե. Տավբան-Պահիր, Ղասրպների (մսագործներ) թաղ. Պեկմեզ-սոխախ, Պլեճենց թաղ. Բանտի ետևի թաղ, Գայսերի դուռ. Աճե մահլե. Զավալ-Փաշա, Սրբ. Սարգիսի ժամուն թաղեր, Քարոտ-սոխախ, Ծածուկ-աղբյուր. Սրբ. Փրկչա թաղ, Ղտնլը-պախչե, Հասանլը. Թայքեսենենց և Հին փտշի բազնից թաղեր. Մայր եկեղեցու թաղ. Խենտեկ-Քենար, Ղուրշունլու Բաղնից և Ճիվան. Ծակե թաղեր, Հայ-թաղ, Դարբնոցի ետևը. Սարըշեյխ, Պալտըր-Բազար, Սև հողեր[2]։

Վերոհիշյալ 33 թաղերում հայերի թիվը կազմում էր 5800 տնտեսություն, մոտ 36 հազար անձով, որոնք 1915 թ. արևմտահայերի տարագրության ընթացքում (հունիս 22 մինչև հուլիս 5) թուրք կառավարության կողմից տեղահանվեցին դեպի Դեր-Զորի (Սիրիա) անապատները։ Նրանց մեծագույն մասը տարագրության ճանապարհին ջարդերից, սովից, համաճարակներից մահացավ։ 1946 թ. Սեբաստիա քաղաքում մնացել էր 250 տուն՝ 1250 անձով՝, իսկ վերջերս՝ 150 ընտանիք միայն[4]։

Գամիրքի երկրորդ հայաշատ քաղաքն էր Կեսարիան (այժմյան Կայսերի կամ Ղայսերի)։ Արդի քաղաքը կառուցված է քարքարոտ մի դաշտավայրում։ Ենթադրություն կա, որ դա վաղ անցյալում եղել է ցամաքած մի լճի տեղ[5]։ Այդ հարթավայրը անմիջականորեն գտնվում է Արգեոս (Իրճիաս) լեռան ստորոտում, ծովի մակերեսից մոտ 1100 մետր բարձրության վրա։

---

[1] Գ. Սրվանձտեանց. Թորոս աղբար. մասն Ա., Կ. Պոլիս, 1879, էջ 137, 161, 171։

[2] Տե՛ս Կ. Դարիկյան. Եղեռնապատում, Պոսթոն, 1924։

[3] «Անատոլուի հայությունը», «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1946, էջ 201։

[4] Տե՛ս դոկտ. Խանդամուրի հոդվածաշարքը՝ «Ուսումնասիրություն մը դեպի Թուրքիա», «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1956, № 3—8։

[5] Ա. Այվազյան, Պատմություն հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, I հատոր, էջ 669։

Արգեոս լեռան շրջանը հնագույն ժամանակներում կոչվել է Բուրուշհանդա[6], որտեղ, ըստ հնագիտական տվյալների, դեռևս 3-րդ հազարամյակի կեսերից գոյություն է ունեցել ասորեստանյան առևտրական մի գաղութ[7]։ Հավանաբար այդ հնամենի առևտրական գաղութի վայրում, ըստ ավանդության, Արամի կողմից կառուցվել է հին Մաժաքը։ Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ Մաժաք քաղաքը Արգեոս լեռանն ավելի մոտ է եղել, քան արդի Կեսարիան։ Արդի քաղաքը գտնվում է Արգեոս լեռան հյուսիսային կողմում, երկու կիլոմետր հեռավորության վրա, որը կառուցվել է հռոմեացի Տիբերիոս կայսեր կողմից և ի պատիվ Օգոստոս կայսեր, անվանվել է Կեսարիա։

Կեսարիան ենթակա է Արգեոսի ստորոտի հարթավայրի բոլոր անդաստահությունների, չստանալով այդ հարթավայրի առավելություններից որևէ դգալի օգուտ։ Օրինակ՝ բաղտրը ջրերի հոսավայր չունենալու հետևանքով, հյուսիս-արևմտյան կողմում կազմվել են մի շարք ճահիճներ ու լճակներ։ Այդ իսկ պատճառով, տեղի կլիման վատառողջ է։ Մյուս կողմից, Արդեոսը դաշտավայրից 3000 մետր իր բարձրությամբ և իր հսկա լանդվածով փակելով բամիների հոսանքը, տմառը միգամած տենդային շոգի պատճառ է դառնում, իսկ ձմեռը՝ խոնավության։

Բնակչության մեծ մասը ամառը բարձրանում է շրջակա այգիներն ու դյուղերը[8]։

Ինչպես վերևում ասվեց, Կեսարիան եղել է հայերի կազմավորման առաջին կենտրոններից մեկը, որտեղ դեռևս հին ժամանակներից սկսել են հայերեն խոսել. «Արամ... հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել գիսուս և գլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն զկղիմայն զայն պոռտին Արմինիան, որ Թարգմանի Առաջին Հայք»[9]։

Այսպես, ուրեմն, հայ ժողովրդի կազմավորման դեռ առաջին շրջանում Կեսարիայում գոյացել է հայ ազգարնակչություն. բայց վաղ միջնադարում, հատկապես քրիստոնեության առաջին դարերին, այն ձուլվել է հույների հետ։ Մեր օրերի Կեսարիայի հայ ազգարնակչությունը հիմնականում կազմվել է Վասպուրականից, Անիից, Կարսից, ինչպես նաև Մանազկերտում հույների պարտությունից հետո, Բարձր Հայքից գաղթած հայերով։ Դեռևս մինչև 13-րդ դարի վերջերը, հայ ազգարնակչության աչքի ընկնող դիրքի և հոծության մասին խոսում է նաև Մարկո Պոլոն։ Հայերի թիվը, այնուամենայնիվ, Կեսարիայում և նրա գավառում իր նորմալ ձևով չի աճում։ Կեսարիայից որոշ թվով հայեր, հետագայում գաղթում են Կիլիկիայի առևտրական կենտրոնները, իսկ Կ. Պոլիսը Թուրքերի կողմից գրավվելուց (1453 թ.) հետո՝ Կ. Պոլիս։ Մյուս կողմից, Լենկթեմուրի և ապա ջալալիների ասպատակությունների ժամանակ ջարդերի և բռնի իսլամացումների հետևանքով, հայերի թիվը Կեսարիայում թեև զգալիորեն նվազում է, սակայն 15-րդ դարի Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ Համադանից գերեվարված արհեստավորներով նորից համալրվում է։ 18-րդ դարի (1730—1731) 30-ական թվականներին Օսմանյան պետության կողմից երբ հայկական որոշ գավառներ խլվում են պարսիկների ձեռքից, շատ հայ մեծատուններ Կեսարիա են գաղթում և զարկ են տալիս այս վերջինի առևտրին։ Ուստի, ինչպես շատ իրավացիորեն ասված է, 19-րդ դարի արևելյան շուկաներում կեսարահայերը 17-րդ դարի ջուղայեցիների տեղն են բռնում։

Կեսարիայում հայերի ամբողջ թիվը մինչև համաշխարհային առաջին պատերազմը 15—17-հազարից չէր անցնում, որոնք ընդհանրապես բնակվում էին քաղաքի հետևյալ թաղերում. 1. Քիչի Գարու, 2. Կյուրճյու, 3. Էմիր Սուլթան, 4. Սասրզ, 5. Հասինլի, 6. Շուտուրպան, 7. Պյոյուկ Օտուններ, 8. Օտուններ Կարապետ, 9. Ֆրրընեը, 10. Սոյանը, 11. Բահչե, 12. Քոյերքան, 13. Սել-ալտը, 14. Հասան Ֆազը, 15. Թոթոզթոս, 16. Սընրեզը, 17. Խարպութ, 18. Ֆարսախ, 19. Ջագալրզ, 20. Գարա-Կաչի, 21. Թավուգեռ, 22. Թավուգեռ Բելիքսի,

[6] L. delaPorte, Les Hittites, Paris, 1936, էջ 30։

[7] Dr. G. Contenau, Civilisation des Hittites et Mitanien, Paris, 1934, էջ 15—60։

[8] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, հ. I, էջ 673։

[9] Մ. Խորենացի, Պատմություն հայոց, 1913, էջ 50։

23. Քեքլիկ, 24. Տատրը, 25. Տատրը-Խարպութ։

Կեսարիան ընդամենը ուներ 114 թաղ, 12 հազար քարաշեն տներով, առանց տնամերձ պարտեզի, իրենց երկհարկանի շինություններով և խիտ դասավորությամբ[10]։ Բնակչությունը կազմում էր մոտ 50 հազար, որից 17 հազարը՝ հայեր (15 հազարը հայ լուսավորչական, մնացածը կաթոլիկ և բողոքական), հույները՝ մոտ 2500[11], մնացածը թուրքեր էին։ Իսկ Վիտալ Կինեի համաձայն, Կեսարիայի բնակչությունը բաղկացած էր 71 հազար անձից, որից 11 հազարը՝ հայեր, 14,400՝ հույներ, իսկ մնացածը՝ մահմեդականներ էին։

Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ, ինչպես Արևմտյան Հայաստանի գավառների, նույնպես և Կեսարիայի հայերը տարագրվելով Սիրիայի անապատները՝ ջարդվեցին։ Այժմ Կեսարիայում մնացել է ընդամենը 450 տուն հայ, բաղկացած 2250 շնչից[12]։

Գամիրքի հայաշատ քաղաքներից երրորդը՝ Կյուրունը կառուցված է հյուսիսից—հարավ երկարաձգված մի ծառախիտ հովտում՝ Թոհմա-սու (Մելաս գետ) թափվող գետակների ափերին։ Կյուրուն անունը ենթադրվում է առաջացած լինի թուրքերեն «Քյուրուն» բառից, որը նշանակում է ավազան։ 15-րդ դարի թուրքերեն հիշատակությունների մեջ Կյուրին քաղաքը «Ին-ոնյու» է կոչվում, այսինքն՝ «Քարանձավի առաջ»։ Թուրքերը Կյուրինը «Ին-ոնյու» են կոչել հավանաբար նրա համար, որ քաղաքը կառուցվել է քարայրների առաջ։ Անցյալում այդ քարայրները կյուրինցիներին ծառայելով որպես բնակարան, նրանց կողմից էլ կոչվել է Կուռնատուն (Կյուրինի տուն)։ Կարծիք կա նաև այն մասին, որ Վասպուրականի հայերի կողմից Կորյուն-ի անվամբ կառուցված քաղաքը հետագայում հնչյունական այլայլոխությամբ դարձել է Կյուրին։ Բայց այս բոլորը մեր կարծիքով, տարակուսելի է, քանի որ այս մասին գրավոր տվյալներ չկան։ Մենք հակամետ ենք ընդունելու որոշ գիտնականների այն կարծիքը, թե Կյուրյունը պտղոմեոսյան շրջանի Նորաենայի աղավաղված ձևն է[13]։ Քաղաքն ուներ հետևյալ գլխավոր թաղերը. Շուղուլ, Օրեն կամ Էրան, Տարեր, Սմկընա, Ջերչիկոր, Խոնավ բլուր (յաշ թեփե), Աշուր (արդյոք չի հիշեցնում Ասուրը), Սև-բլուր (Գարա թեփե) Ֆերման Մահլե, Սաղ, Քեթենչայրը, Խաս-բաղ, Ջախ-ձոր (ըստ ոմանց՝ ջաղացքի ձոր)։ Այդ թաղերը կառուցված են իրարից 5-ից մինչև 20 բոպե հեռավորության վրա, որի պատճառով քաղաքի մեկ ծայրից մյուսը, այսինքն՝ Շուղուլի ծալիզ մինչև Ջախձորի Ակը տևում է մոտ երկուս և կես ժամ։ Գլխավորապես հայերը ապրում էին հետևյալ թաղերում՝ Ջախ-ձոր՝ կամ Ջախ-ձոր՝ 400 տուն, Սև-բլուր (Գարա-թեփե)՝ 300 տուն, Խաս-Բաղ՝ 200, Շուղուլ՝ 200, Որեն կամ Էրան՝ 250, Սմկընա՝ 28, Ջերչիկոր և Խոնավ Բլուր (Յաշ-Թեփե) երկուսը միասին՝ 40 տուն[14]։ Թուրքերը գլխավորապես բնակվում էին Տարեր և Աշուր թաղերում։ Կային նաև հայերի հետ խառն թաղեր։

Քսաներորդ դարի սկզբին Կյուրինի ընդհանուր բնակչության թիվը հաշվվում էր երեք հազար տուն, որի երկու հազարը հայ։ Սակայն մենք ենթադրում ենք, որ դա չափազանցված է։ Նախ որ հայ բնակչության տների թիվը, ըստ տեղի առաջնորդարանի հաղորդած վիճակագրական տվյալների (Բնաշխարհիկ բառարանում), 1550-ից չէր անցնում։ Երկրորդ, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Կյուրինի թաղերը ձորերով, բլուրներով, նույնիսկ գետերով անջատված լինելով, մեծ տարածություն են բռնում։ Օրինակ, Սև բլուրը (Գարա-Թեփե) Աշուրից բաժանված է գետով, իսկ տները ի տարբերություն Կեսարիայի և Սեբաստիայի շենքերի, իրարից բավականին անջատ են. յուրաքանչյուր տուն կառուցված է առանձին, շրջապատված ընդարձակ պարտեզներով, հետևաբար ենթադրվում է, որ տների թվական չափազանցությունը հետևանք է քաղաքի տերիտորիալ մեծությանը։

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում—հայերը տարագրվել և ջարդվել

---

[10] Տե՛ս Ե. Երկայնաբ. «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, № 2087։

[11] Հ. Էփրիկյան. Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905։

[12] Անատոլուի հայությունը, «Հայաստանի կոչնակ», 1946. սեպտեմբեր ամիս, էջ 901։

[13] N. Adontz, Histoire d'Armenie, Paris, 1946, էջ 41, 316։

[14] Հ. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, տե՛ս Կյուրին։

են, նրանց տները ավերվել։ Այժմ Կյուրյունում հայեր բոլորովին չեն մնացել։

Արարկիրը կառուցված է 11-րդ (1021 թ.) դարում, Վասպուրականի Արծրունյաց՝ Վասպուրականի դաղթականության կողմից (Արորակա կամ Արաբրակրնուա (Arauraca, Arabrakenoi) կոչված մի հին վայրի մոտակայքում, Մալաթիայից 55 կիլոմետր դեպի հյուսիս՝ Եփրատի աջ ափին, դետից 25 կիլոմետր հեռու։ Այդ հին քաղաքը կոչվում է Անդի-քաղաք, որը հետագայում կառուցված Արարկիրի մի արվարձանն է կազմում, որտեղ բնակվում են թուրքեր։

Արարկիր անվան ծագումը տեղացիները բացատրում են ավանի մեջտեղից հոսող դետակի՝ Ժամու-չայի եզրին կառուցված լինելու հանգամանքով՝ Առու-ափ-կերտ (այսինքն՝ առվի ափին կառուցված)։ Մ. Նաթանյանը այդ անվան առաջացումը բացատրում է այլ կերպ՝ «արբ և կերս։ Այս երկու բացատրությունն էլ բոնազբոսիկ են և հիմնավորված չեն։ Մեր կարծիքով, դա մի հին հռոմեական բերդաքաղաքի՝ Արաբրակնուայի անվան աղավաղված ձևն է, որտեղ այդ անունով դրամ է կտրվել հռոմեացիների կողմից[16]։

Արարկիրը Անտիաավրոսի ստորոտում, մի բլուրի լանջին, զեղեցիկ և բարձր դիրք ունի։ Տները քարակերտ են, կառուցված ամֆիթաարոնաձև և դասավորված սանդխանման կարդ-կարդ, պարտեզներով շրջապատված։ Տների հատակները մեծ մասամբ սրբատաշ քարերով սալահատակված կամ տախտակամած էին։ Տների համար սովորական էին տափարակ տանիքները, որոնց վրա զարԲն կամ կապոտ հոռ կոչված կավահողը լցնելով, լող քարով պնդացնում էին, միանգամայն ապահովելով կաթիլքից ու խոնավությունից։

Արարկիրն ուներ հետևյալ թաղերը՝ Շահրոզ կամ Սրբակավուր, Սուփ Գիվերք (սուրբ Գևորգ), Սուփ Նշան, Ժամու կամ Պզտի չարշուի թաղ, Զարսուի թաղ, Գաղանճրլար, Բասմաճրլար, Պերենկև, Գարակող, Քեշիշլերի թաղ, Բոշի թաղ, Խոջա Ալի, Ալմասեքյանց, Եկավենց, Տերպետերենց թաղ։ Իսկ ուրպես արվարձան ուներ Հնձանակ, Ամպրրլա, Ուլու-Բուղար (Մեծ աղբյուր) և Անդի քաղաք ավանները։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Արաբկիրի ընդհանուր բնակչության թիվը հասնում էր մոտ 20 հազարի, որի կեսը հայեր էին, այժմ մնացել են 150 տուն, մոտ 600 շնչով։

Ակնը կամ Էդինը կառուցված է 11-րդ դարի 20-ական թվականներին, Վասպուրականի դաղթականների կողմից։ Սակայն կա նաև այսպիսի ավանդություն, որ Ակնի արվարձաններից Ապուշեխը կառուցվել է Վասպուրականի, իսկ Ակնը՝ Անիի հայերի կողմից։ Ակնը դժվարամատչելի, բայց դեղաբեսիլ մի բարձունքի վրա է, Արաբկիրից 35 կիլոմետր դեպի հյուսիս, իսկ Տիվրիկից՝ 12։ Քաղաքի ճիշտ ստորոտից անցնում է Եփրատը, արևելյան և արևմտյան կողմերում կան չափազանց նեղ և դժվարակոխ կապաններ, իսկ հյուսիսային և հարավային կողմերում լեռները համարյա բացարձակ անանցանելի են։ Այդպիսի վայրում բնակավայր հիմնելը, այդ ժամանակաշրջանի համար պաշտպանության տեսակետից անշուշտ մեծ նշանակություն պետք է ունենար։

Ակնի շրջակայքը նախկինում կոչվել է Մարնտունիկ։ Այդ մասին օսմանյան հին փաստաթղթերում կա հիշատակություն։ Մարընտունիկը, հետագայում Անիից, Կարսից եկած դաղթականներով մեծանալով, հասնում է մինչև Ակն կոչվող Քարանձավ դրդյակը։ Այդ պատճառով այն վերանվանվում է Ակն[17], որը աղավաղվելով թուրքերեն լեզվում, դառնում է էդին։ Մարնտունիկի «Ակն» վերանվանումը պատահականություն չէ, քանի որ այդ վայրում կան բազմաթիվ ակնաղբյուրներ՝ Ակն ծով կամ Ակն զով, Կաթն-աղբյուր, Իսնակ, Բերդի-աղբյուր, Խնկաձոր, ինչպես նաև՝ Ջոխ-մար (Ճոխ մայր) և Գոլուն, որոնց ջրերը միանալով դարձնում են բազմաթիվ ալրաղացներ։

---

[16] Տե՛ս Մուշեղ Սերոբյան, Արարկիրի մասին, սարեղիրք, «Ոսկեդիտակ», Պեյրութ, 1945, էջ 54, և Laurents J., L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en, Paris, 1919, էջ 886։

[16] Անատոլուի հայերը, ըստ «Հայաստանի Կոչնակում» 1946 թ. Կեսարիայի Առաջնորդարանի կողմից տրված տեղեկագրի։ Սակայն այդ թվականից հետո մեծ մասամբ գաղթել են դեպի Սիրիա։ Այժմ հին Արարկիրում մնացել են 150—200 հայ։

[17] Հմմտ. Ց. Կ. Ճանիկյան, Հնութիւնք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 14։ Ա. Քեչյան, Ակն և Ակնեցին, հատոր Ա, տպ. Պուրեշ, 1942, էջ 12—13։

Ակնա տները երկհարկ են և մասամբ նաև եռհարկ. վերին հարկերը՝ էլվաճեները. ընդհանրապես փայտաշեն են, իսկ ստորին հարկերը՝ քարաշեն։ Քաղաքի վերի և Տաշ-

տադայում. հատկապես 17-րդ դարի ընթացքում, ջալալիների հաճախակի ասպատակությունների հետևանքով. ինչպես քաղաքի. այնպես և գյուղերի բնակիչների մեծ

ԱԿՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ



Նկ. 5.

տիրի թաղերի տները, բլուրի լանջին այնպես են կառուցված, որ մեկի տանիքը ծառայում է որպես ճանապարհ կամ հրապարակ մյուսի համար։ Այգիներով շրջապատված տները բլուրի լանջին, մի սքանչելի տեսարան են ներկայացնում, որն իր արտահայտությունը գտել է ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ[18]։

Միջնադարում Ակնը իր շրջակա 27 գյուղերով, ինչպես տեսանք, մի մեծ հայկական կենտրոն էր ներկայացնում։ Սակայն հետ-

մասը դաղթում են. իսկ մնացող գյուղերը, երբեմն ամբողջովին. բռնի իսլամացվում են։ Այնպես որ 19-րդ դարի 80-ական թվականներին Ակնի հայ բնակչության ընդհանուր թիվը հաշվվում էր ոչ ավելի բան 5442 (թուրքերինը՝ 4286), բայց համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին. հայ բնակչությունը առնվազն կրկնապատիկ լինելու փոխարեն, մնացել էր նախորդի մեկ հինգերորդը (հազարից ավելի), իսկ այժմ միայն 30 տուն է, 150 շնչով։

Կեմերեկ (Գամրակ) հայաշատ ավտոր, ավելի ճիշտ՝ գյուղաբաղաքը, գտնվում է Սեբաստիայի հարավ-արևմտյան կողմում, 90 կիլոմետր հեռավորության վրա։ Նա կառուցված է լայն բացված երկու բլուրների

[18] 1895 թ. թուրքական սուլթան Համիդի կողմից կազմակերպված ջարդերի ժամանակ Ակնը մասամբ ավերվել էր, այդ առթիվ աշուղները երգ են հյուսել։

Էկինը ավերակ է դարձել
Բլբուլը չի երգում։

միջև մի ընդարձակ հովտի բերանին։ Ավանի առջևը՝ դեպի արևելք, տարածվում է Ջիրիլ-Յաղրյի (Ճահճոտ դաշտ) և Զբուխի հարթավայրը, շրջապատված Սելջուկ, Շեմեն, Կովարխաչ և Գարատեղ լեռներով։ Արևմտյան կողմում, Կեսարիա տանող ճանապարհի վրա, Սար-օղլան հայաբնակ գյուղն է։ Հարավային սահմանում տարածվում են Խնձորի (Խնձրի) լեռները, որոնք կազմում են Անտիտավրոսի շարունակությունը, իսկ հյուսիսից ավանի հողերը հասնում են մինչև Հալիս գետը, որը գտնվում է Կեմերեկից՝ 3 կիլոմետր հեռավորության վրա։

Կեմերեկ անվան ծագումը, ինչպես ասվեց նախորդ գլխում, առաջացել է Գամիրք բառի տառադարձումից։ Թ. Գուշակյանը այդ մասին գրում է, որ Կամարակ անունը, որը երբեմն գործ են ածել հայոց լեզվի ուսուցիչները, հայաշրջման ձախող մի փորձ է, անշուշտ, և որ այն ժամանակ էլ ընդունելություն չէր գտել։

Կեմերեկն ուներ յոթը թաղ, բայց ժողովուրդն ըստ ավանի դիրքի, այն բաժանում էր երկու մասի, բարձրադիր թաղերը միասնական անունով անվանվում էր Վերի թաղ, ձորաբերանի թաղերը՝ Վարի թաղ։ Վերի մասը զարունակում էր Բերդ (զալե) և Բլուր թաղերը, որտեղ տները դասավորված էին ըստ այդ երկու բլուրների բնական գիրքի, այնպես որ մեկի տանիքը մյուսի համար ծառայում էր ճանապարհ կամ հրապարակ, իսկ ավանի վարի մասում կար չորս թաղ՝ Թեֆֆե, Էվլիա, Շուկա և Ռուս, որտեղ տները կառուցված էին ձորաբերանի համեմատաբար տափարակ վայրում։

Ավանի ընդհանուր բնակչության թվի մասին թեև կան մեկից ավելի տվյալներ, բայց Սեբաստիայի հայոց առաջնորդարանի 1913 թ. տվյալներով, որ համարում ենք ավելի ճիշտ, ունեցել է ընդամենը 1252 տուն, որից 902-ը հայ և 350 թուրք[19]։ Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում՝ հայերի տեղահանության և ջարդերի հետևանքով, Կեմերեկում մնացել էր 40 տուն հայ, 245 շնչով[20]։

Տիվրիկ կամ Տիվրեկե գյուղաքաղաքը կառուցված է շրջանաձև, բարձր լեռներով պատսպարված մի հովտի մեջ, այնպիսի մի վայրում, որտեղ վերջանում է Տավրոսը և սկսվում են Անտիտավրոսյան լեռները։ Այդ վայրում դեռևս հնագույն ժամանակներից եղել է բերդ, որը պավլիկյանների կողմից 9-րդ դարի երկրորդ կեսերին գրավվելով, դառնում է նրանց հիմնական կենտրոնը։ Դաշտի մեջտեղից հոսող Ջալթա-չայ վտակը քաղաքը բաժանում է երկու գլխավոր մասի։ Ձորակի արևելյան կողմը գտնվում է միջնաբերդը, կառուցված մի բարձր բլուրի Բևի վրա և իր շրջակա տներով կազմում է Բերդաթաղը, այսինքն՝ հին քաղաքը։ Նրանից ոչ շատ հեռու, ձորակի մյուս կողմում, գտնվում է նոր թաղամասը՝ Այգեթաղը։ Կան նաև Խոթեվանքի, Սուրբ Եղիայի, Ճիկիրշանի և Սուրբ Սարգսի թաղերը։

Հայերը դեռ պավլիկյանների ժամանակից սկսած բնակվել են Բերդաթաղում, որոնց թիվը, ըստ Ա. Աղեքսանդրյանի, եղել է երկու հազար տուն[21]։ Հետագայում մնացել էր հարյուր տուն միայն, և այդ պակասումը հավանաբար սկսվել է 9-րդ դարի երկրորդ կեսերին՝ պավլիկյանների կրած կոտորածների և նրանց մեծ մասի Թրակիա գաղթեցնելու հետևանքով։ Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին տեղի հայ բնակչության թիվը հաշվվում էր չորս հազար, իսկ թուրքերինը՝ կրկնապատիկը, որով Տիվրիկի բնակչության ընդհանուր թիվը մոտ 12 հազար էր։ 1946 թվականին Կեսարիայի առաջնորդարանի կողմից Թուրքիայում մնացած հայերի մասին տրված տեղեկության մեջ Տիվրեկում հայեր լինելու մասին թեև հիշատակություն չկա, բայց 1955 թվականին դոկտ. Խանդամուրը իր «Ամերիկայից դեպի Թուրքիա» ուղեղրության մեջ գրում է, որ այնտեղ մնացել է ընդամենը հինգ հայ ընտանիք[22]։

Դարանդա կամ Տարենտե գյուղաքաղաքը գտնվում է Կյուրյունի հարավ-արևելյան կողմում, Թոհմա-սու (Մելաս գետ) թափվող գետակներից՝ Պալրգլը-սուի (Ձկնուտ ջուր) ափին, արևելքից՝ Ալի-Դերեի, արևմուտքից՝ Հացեկ լեռանց միջև։ Ավանը շրջ-

---

19 Թ. Գուշակյան, Ճամբու վերհիշումներ, «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1914, փետր. 10/23։

20 «Անատոլուի հայերը», «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1946, սեպտ. ամիս։

21 Ա. Աղեքսանդրյան, Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիո, Վենետիկ, 1911։

22 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1956, 3—8 համարները, դոկտ. Խանդամուրի հոդվածները։

ապատված է մրգատու պարտեզներով։ Բնակչության մեծամասնությունը թուրքեր են, հայերը հաշվվում էին նախքան համաշխարհային առաջին պատերազմը՝ 310 տուն, 1700 շնչով, որոնք բնակվում էին Հացեկ լեռան ստորոտում ընկած հինգ թաղերում՝ Լկեղեցու թաղում երկու հարյուր (200) տուն, Գալարբմի թաղում՝ 40, Հայու-գոգ թաղում՝ 70, Ենի-մահլեում՝ 20, Հագիր թաղում՝ 30 տուն[23]։

Այստեղ տեղին է նշել մի հանգամանք, որ Գամիրքում հայկական բնակավայրի տեղագրությունը խոսում է այն մասին, որ միջնադարում Հայաստանի ներքին գավառներից գաղթող հայերը, բացի արդեն գոյություն ունեցող քաղաքներից, բնակություն են հաստատել նաև այնպիսի վայրերում, որոնք ինքնապաշտպանության համար առավել հարմարություն էին ներկայացնում։

Այսպես, ուրեմն, 11—12-րդ դարերում Գամիրքը ներկայացնում էր հայկական կոմպակտ մի երկրամաս, ու հետագայում թուրքական ասիմիլյատորները բռնի միջոցներով թեև ջանացել են մաշել հայերին, բայց մինչև համաշխարհային առաջին պատերազմը նրանք իրենց ազգային գեմքը չէին կորցրել։ Օրինակ, թուրքական կառավարությունը թեև քաղաքական որոշ նկատառումներով Ակնը և Արարկիրը խարբերդի վիլայեթի վարչական բաժանմունքի մեջ էր անցկացրել, սակայն այդ շրջանի հայերը իրենց նիստ ու կացով, սովորություններով հիմնականում մասն են կազմում Գամիրքի հայ ազգաբնակչության, քանի որ նրանք պատկանում էին Վասպուրականի և Անիի միևնույն գաղթականության։

Ակնի և Արտրկիրի շրջակա հայ գյուղերը նույնպես կազմվել են վերոհիշյալ գաղթականության հետագա սերունդներից, որոնց մի մեծ մասը թեև բռնի իսլամացվել է, բայց մինչև առաջին համաշխարհային պատերազմը դեռևս հայեր կային Արարկիրի շրջակա հետևյալ գյուղերում՝ Անջրդի, Սաղմկա, Մաշկերտ, Ծաղ, Շեփիկ, Քուշնա, Էհնեցիր (Անեցիք), Վաղշեն, Աղն, Աշոտկա, Միատուն։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Ակնի և Արաբկիրի ու նրանց շրջակա գյուղերի հայ բնակչության թիվը հաշվվում էր ավելի քան քսան հազար. յոթ հազար Ակնում, տաս հազար Արաբկիրում և երեք հազարից ավելի շրջակա գյուղերում։

Գամիրքում, բացի հայերից և թուրքերից, կային նաև հույներ, չերքեզներ[24], թուրքմեններ, քրդեր, ավշարներ և այլն։ Այսպիսով Գամիրքը ընդգրկում է Սեբաստիա գավառի յոթ գավառակների (գազա) 97 գյուղախմբի շրջկենտրոնները, ինչպես նաև Կեսարիան իր շրջակայքով։ Կեսարիայի և շրջանի գյուղերում, նախքան առաջին համաշխարհային պատերազմը, հայ ազգաբնակչությունը հաշվվում էր մոտ 37 հազար։

Որպես եզրափակում պետք է ասել, որ պատմական Գամիրքը Սեբաստիայի 9 գավառակներից (գազա) իր մեջ ընդգրկելով 7-ը, կազմում էր մոտավորապես 30 հազար քառ. կիլոմետր մի տարածություն, իսկ հիշյալ վիլայեթի ընդհանուր բնակչության թիվը 1890 թ., ըստ Վիդալկինի, ընդամենը կազմում էր 547,015, որից թուրք, թուրքմեն և չերքեզներ՝ 300,810, գրզրլպաշներ և այլ մահմեդականներ՝ 150,868, հայեր՝ 63,404 հույներ՝ 31,933։

Այս պայմաններում գամիրքահայերի մոտավոր թիվը ունենալու համար ավելորդ չի լինի ստորև քննության առնել Սեբաստիայի կուսակալության բնակչության մասին հետևյալ չորս վիճակագրական ցուցակները։

1. Սեբաստիայի կուսակալության չորս գավառների (Սվազ, Թորատ (Եվզոկիա), Ամասիա, Շաղինգարահիսար) հայերի ընդհանուր թիվը, ըստ Սալնամեի, 1890 թ. կազմում էր 170, 773։

Թուրքերինը, թուրքմեններինը՝ (սյունի մահմեդականներ) . . .559,600
Ղրղզպաշներինը և չիա մահմեդականներինը՝ 279,834
Հույներինը և հրեաներինը՝ . 76,068

2. Համաձայն Կոստանդնուպոլսի պատրիարքարանի վիճակագրության, 1912 թ. բնակչության կազմը եղել է՝

Հայեր 165,000

---

[23] Ա. Աղեքսանդրյան. Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիո. Վենետիկ. 1911։

[24] 1860-ական թվականներին Կովկասից Թուրքիա գաղթած չերքեզ ցեղերի (զարարդա, հաթրխո, արաղա, նոգայ և չեչեն) մի մասը տեղավորվեց Գամիրքի Ուզուն յայլա կոչված լեռնաշղթայում։

Թուրքեր 192,000
Չերքեզներ 45,000
Քուրդեր (նստակյաց) . . 35,000
Քուրդեր (թշվոր) 15,000
Հույներ 30,000
Նեստորականներ, խալդեր և հակոբյաններ 25,000

3. Բանասեր ուսուցիչ Կարապետ Գարիկյանը իր սեփական պրպտումների վրա հիմնված, սեբաստիացի հայերի ընդհանուր թիվը ներկայացնում է իր «Եղեռնապատում» աշխատության մեջ 350,000
Հույներինը 47,000
Թուրք, քուրդ, չեչեն, զազպաշ և այլն 503,000

4. Սեբաստիայի առաջնորդարանը, նախքան առաջին համաշխարհային պատերազմը, Մինրտն Զուղասրդյանի միջոցով կազմած նահանգային վիճակագրության մեջ սեբասահայերի ընդհանուր թիվը ներկայացնում է 262,000
Թուրքերինը 190,000
զազրլպաշներինը 125,000
հույներինը 45,000
չերքեզներինը 45,000
քուրդերինը 50,000
խալդեր, նեստորականներ, ավշարներ և չեչեններ 30,000
Ընդամենը՝ 747,000

Վերոհիշյալ չորս վիճակագրական ցուցակներից ամենահավտնականեր ընդունում ենք Սեբասիայի առաջնորդարանի նահանգային վիճակագրական ցուցակը, ըստ որի հայերի թիվը Սեբաստիայի ամբողջ նահանգում, այսինքն՝ չորս գավառներում 262,000 է. սա ունի մի քանի ղաաճառներ.

1) 1895 թ. ջարդը, քրդական «Համիդիե ալայներ», չերքեզների հնչումների հետևանքով արատվոգթը դեպի Ամերիկա (ԱՍՆ) մինչև համաշխարհային առաջին պատերազմը ստացած չէին այնպիսի մի համատարած կերպարանք, որ Սեբաստիայի նահանգում հայերի թիվը, երեսուն տարվա ընթացքում 262 հազարից իջներ 165 հազարի։

2) Հարկային և այլ պատճառներով, ինչպես հայտնի է, հայերը իրենց ընտանիքի անդամների թիվը միշտ նվազ էին ցույց տալիս թուրքական կառավարությանը։

3) Օսմանյան պետության քաղաքական շահերն էլ այնպես էին պահանջում, որ հայերի ընդհանուր թիվը, Հայաստանի վեց նահանգներում նվազ ցույց տրվեր։ Այս և նման ուրիշ մի շարք պատճառներով պետք է ընդունել, որ 262,000 թիվը մոտավորապես ճիշտ է Սվազի հայ բնակչության համար. որով և Սեբաստիա նահանգի հայերի ընդհանուր թիվը բարձրանում է մոտ մի հարյուր հազարով։ Եթե հիշյալ թիվը բաժանելու լիներ Սեբաստիայի կուսակալության չորս գավառների տարածության վրա, ստացվում է հետևյալ պատկերը՝։

Սեբաստիայի (Սվազ) նահանգի ընդհանուր տարածությունն էր 83,700 քառ. կիլոմետր, իսկ միայն Սեբաստիայի կենտրոնական գավառի (սանճագ) տարածությունն է 39,450 քառ. կիլոմետր, այսինքն՝ նահանգի ընդհանուր տարածության կեսից քիչ պակաս։ Այս դեպքում Սեբաստիայի գավառի (սանճագ) հայության թիվը բարձրանում է մոտ 45 հազարով։

Սեբաստիայի ինը գավառակների հայության ընդհանուր թիվը, ըստ 1890 թվի Սալնամեի, կազմում էր 63,404 մարդ, ավելացրած 45 հազար, հավասար է 108,404-ի։ Արդ, Գամիրքը, ընդգրկելով Սեբաստիայի ինը գավառներից 7-ը, այսինքն՝ ինը գավառակների 123 գյուղախմբերի կենտրոններից 97-ը, կազմում է Սեբաստիա գավառի ընդհանուր տարածության չորս հինգերորդը։ Այդպիսով, Գամիրքի չորս հինգերորդի սահմաններում, նախքան համաշխարհային առաջին պատերազմը, բնակվում էին մոտ 86 հազար հայեր, իսկ Գամիրքի մեկ հինգերորդ մասը, որն իր մեջ ընդգրկում էր Կեսարիան իր շրջակայքով, ինչպես նաև Ակեր և Արարկիրը իրենց շրջակա գյուղերով, ուներ՝ ավելի քան 57 հազար հայ ազգաբնակչություն։ Հետևաբար Կապադովկիայի Գամիրք գավառում, մինչև առաջին համաշխարհային պատերազմը ընդամենը բնակվում էին ավելի քան 143 հազ. հայեր։ Եվ այժմ, ըստ Կեսարիայի հայոց առաջնորդարանի 1946 թ. վիճակագրական տվյալների և վերջին տեղեկությունների, Գամիրքում ընդամենը մընացել են մոտ 11,500 անձ, որոնք մեծ մասամբ բնակվում են Սեբաստիա, Կեսարիա, Արարկիր, Տիվրիկ քաղաքներում։

[25] Հմմտ. Վ. Համբարձումյան, Գիւղաշխարհ, Փարիզ, 1927։

Անատոլուում ընդհանրապես և մասնավորապես Գամիրքում, մնացած հայերի մասին ահա թե ինչ է գրում Կեսարիայի առաջնորդը՝. «Երբեմնի հայաշատ գավառների հայությունը այսօր աստ ու անդ ապրում է թափառական աննպատակ մի կյանք։ Անատոլուի մեն մի գյուղի մեջ կա մի հայ ընտանիք, որ զրկված է մայրենի լեզվից, ինչպես նաև տոհմային նիստ ու կացից։ Շատերը երկու անունով են կոչվում, այսինքն՝ հայ և թուրքական։ Եվ տքնաջան աշխատությամբ իրենց օրապահիկն են հայթայթում։ Հայը թեև աղքատ է, բայց չի մուրում։ Նա հարմարվելով միջավայրի պայմաններին, ապրում է այնպես, ինչպես իր դրացի գյուղացին։ Երբեմն քաղաքս այցելում են հայեր, որոնք բոլորովին անտեղյակ են կրոնական որևէ պաշտամունքից և արարողությունից, ոմանք խաչակընքել նույնիսկ չեն գիտեր։ Երբեմն չափահասներ, նույնիսկ զավակների տեր ծնողներ, իրենց փոքրիկների հետ մկրտվում են։

[26] Մանրամասն ցուցակը տե՛ս հավելվածում։

Այսօր Անատոլուի ամենահայաշատ կենտրոնն է Կեսարիան, որտեղ բնակվում են ավելի քան 450 ընտանիք, որոնք 53 գյուղերից եկած և հաստատված են քաղաքիս մեջ, լոկ մի ապրուստի համար, սրանց մեծամասնությունը որպես բանվոր աշխատում են հարևան գյուղացիների արտերում և ապուխտի գործարաններում։ Սրանց կիներն էլ համառ աշխատությամբ նեցուկ են լինում իրենց այրերին, որոնք հազիվ ապրում են, և աղքատ բնակարանների մեջ բնակվելով, հիվանդկախ մի վիճակ ունեն»։

Այն ահավոր ոճիրը, որն իրագործվեց հայ ժողովրդի նկատմամբ, համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ շովեն ժոն-թուրքերի կողմից, ավելի վառ արտահայտելու համար հավելվածում տրվում են մինչ այդ Գամիրքի հայաբնակ շրջաններում և գյուղերում եղած բնակչության թվերը, ինչպես նաև այժմյան թվերը։

[27] Հայկազուն Ա. քահ. Կարապետյան, «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1946, սեպտեմբեր 21, № 38։